ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-52-Ո-Կ-13

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔԻ ՀԻՄՔՈՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 26.01.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ԲԴԽ-1-Ո-Կ-4 ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

17 սեպտեմբերի 2025 թվական — ք. Երևան

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

նախագահությամբ՝
Բարձրագույն դատական խորհրդի նախագահ — *Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆԻ*

մասնակցությամբ՝
անդամներ — *Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ*
Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑԻ
Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ
Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ԷԴ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Ք. ՄԿՈՅԱՆԻ

քննության առնելով «Դատավոր Սուրեն Անտոնյանի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշումը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի» 157-րդ հոդվածով նախատեսված կարգով վերանայելու մասին» Սուրեն Անտոնյանի 23.07.2025 թվականի դիմումը (այսուհետ նաև՝ Դիմում),

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

23.07.2025 թվականին Սուրեն Անտոնյանը (այսուհետ նաև՝ Դիմող) դիմել է Բարձրագույն դատական խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ խնդրելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 157-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված կարգով վերանայել Խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշումը:

04.08.2025 թվականին կայացած նիստում Խորհուրդը որոշել է Դիմումի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով: Դիմումի քննության համար զեկուցող է նշանակվել Խորհրդի անդամ Արմենուհի Հարությունյանը:

Կողմերը ծանուցվել են կիրառելի իրավանորմերի, զեկուցող ընտրելու մասին: Կողմերի կողմից բացարկի և Խորհրդի անդամների կողմից ինքնաբացարկի միջնորդություններ չեն ներկայացվել:

13.08.2025 թվականին Արդարադատության նախարարը Խորհրդին է ներկայացրել պատասխան գրություն, որի պատճենն ուղարկվել է Դիմողին:

25.08.2025 թվականին՝ դիմումի քննարկման օրը, Խորհուրդ է ստացվել Դիմողի գրությունը, որով վերջինիս ներկայացրած դիրքորոշումները և կից փաստաթուղթն ուսումնասիրելու համար նիստը հետաձգվել է և հաջորդ նիստի օր է նշանակվել 02.09.2025 թվականը:

02.09.2025 թվականին կայացած նիստում Դիմումի քննությունն ավարտվել է: Որոշման հրապարակման օր է նշանակվել 17.09.2025 թվականը:

2. Դիմողի դիրքորոշումը

Դիմողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև նաև՝ ՄԻԵԴ) Սուրեն Անտոնյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 20140/23) 23.01.2025 թվականի վճիռը (այսուհետ նաև՝ Վճիռ), նշել է, որ ՄԻԵԴ Վճռով արձանագրվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ հաշվի առնելով Խորհրդի նախագահի անաչառ չլինելու հանգամանքը և մասնավորապես նշվել է, որ. «*Իր որոշման մեջ ԲԴԽ-ն անդրադարձել է այն փաստին, որ Գ.Մ.-ն իր բաժնեմասը հանձնել է*

հավատարմագրային կառավարման, և որ ըստ Դատարանի նախադեպային իրավունքի՝ դատավորների ընդհանուր ժողովի միայն մեկ անդամի կողմնակալությունը չի կարող կասկածի տակ դնել ամբողջ մարմնի անաչառությունը: Այնուամենայնիվ, Դատարանի համար պատճառաբանությունը համոզիչ չէ, ավելին, չի կարողացել ցրել դիմումատուի մտավախությունները՝ Կ.Ա.-ի անաչառության հետ կապված: Մասնավորապես ԲԴԽ-ն միայն անդրադարձել էր դիմումատուի պնդմանը՝ Կ.Ա.-ի կնոջ և Գ.Մ.-ի միջև տնտեսական կապերի մասով, չտալով որևէ պատասխան դիմումատուի կոնկրետ փաստարկներին՝ Կ.Ա.-ի և Գ.Մ.-ի մտերիմ անձնական հարաբերությունների վերաբերյալ, և ըստ այդմ, Կ.Ա.-ի՝ կոնկրետ գործով կայացված որոշումների վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ:»:

Միաժամանակ Դիմողը վկայակոչել է Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ մասի 2-րդ կետը, 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերը և նշել, որ սույն դեպքում ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ՄԻԵԴ-ի 23.04.2025 թվականին ուժի մեջ մտած Վճռով հիմնավորվել է իր՝ ՀՀ միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման փաստը, ինչը հիմք է Խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշման վերանայման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ Դիմողը խնդրել է. «1. Վերանայել Սուրեն Անտոնյանի վերաբերյալ կայացված Խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշումը: 2. Վերանայման պահանջով նշանակվելիք դատական նիստի օրվա և ժամի մասին ծանուցել նաև էլեկտրոնային փոստի միջոցով:»:

25.08.2025 թվականին Խորհուրդ մուտքագրված գրությամբ, ի թիվս այլ տեղեկությունների, Դիմողը ներկայացրել է դիրքորոշում Արդարադատության նախարարության կողմից ստացված պատասխանի, իրականացվող քննության ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկացրել է Խորհրդի 2023 թվականի հունվարի 26-ի ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշման կայացման պահին Խորհրդի անդամ հանդիսացող դատավորների, նաև դրանից հետո նշանակված դատավորների նկատմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ Արդարադատության նախարարությանը դիմելու մասին՝ կցելով գրության պատճենը:

3. Արդարադատության նախարարի դիրքորոշումը.

Արդարադատության նախարարը 14.08.2025 թվականին Խորհուրդ ներկայացված դիրքորոշմամբ, ի թիվս այլ տեղեկությունների, հայտնել է, որ. «(...) Լիազոր մարմինը, բարձր գնահատելով ՄԻԵԴ-ի՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում վճռորոշ ազդեցություն ունեցող միջազգային կառույցի դերակատարությունը, և հարգելով վերջինիս կողմից կայացված ակտերի պարտադիրության հատկանիշը, ձեռնպահ է մնում Որոշումը վերանայելու հիմքի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելուց, իսկ Նախարարի՝ 26.12.2022 թվականի թիվ

111-Ա միջնորդության բովանդակության մասով Լիազոր մարմինը պնդում է նախկինում արտահայտված դիրքորոշումները:»:

4. Դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

4.1. Արդարադատության նախարարը 2022 թվականի դեկտեմբերի 26-ին թիվ 111-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացրել Խորհուրդ՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ նշելով, որ կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 22343/08) գործով 2015 թվականի դեկտեմբերի 3-ին կայացված վճռի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

4.2. Խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշմամբ (նախագահությամբ՝ Խորհրդի նախագահ Կ. Անդրեասյանի, մասնակցությամբ՝ անդամներ Հ. Գրիգորյանի, Ե. Թումանյանցի, Ն. Հովսեփյանի, Մ. Մակյանի, Ա. Մխիթարյանի, Ս. Չիչոյանի, Վ. Քոչարյանի) որոշվել է. «1. Արդարադատության նախարարի միջնորդությունը՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել:»:

4.3. Սուրեն Անտոնյանը 16.05.2023 թվականին գանգատ է ներկայացրել ՄԻԵԴ (գանգատ թիվ 20140/23) և ՄԻԵԴ-ը 23.01.2025 թվականի Վճռով արձանագրել է նաև, որ. «(...) տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Կ.Ա.-ի անաչառ չլինելու մասով (...):»:

4.4. 21.07.2025 թվականին Սուրեն Անտոնյանը դիմել է Խորհրդին՝ խնդրելով Օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված կարգով վերանայել Խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշումը:

5. Խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Խորհուրդը, ուսումնասիրելով Դիմումը, Դիմումի հիմքերն ու հիմնավորումները, Արդարադատության նախարարի պատասխանը, արձանագրում է հետևյալը.

Օրենսգրքի 156.1.-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ ներկայացված բողոքները քննում և դրանց

վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել նիստում: Բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ կայացվում է որոշում:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը կատարվում, և որոշումը կայացվում է բողոքը ստանալուց հետո՝ երկամսյա ժամկետում:

Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի վերանայելու դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին իր որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով:

Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են Բարձրագույն դատական խորհրդի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման վերանայման համար, եթե՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած դատական ակտով հիմնավորվել է դատավորի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը վերանայելու դիմումը կարող է ներկայացվել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած մարմնի կամ այն դատավորի կողմից, որի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում է կայացվել:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը վերանայելու համար հիմք հանդիսացող հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է դիմում ներկայացրած անձը:

Վերոգրյալ նորմերի հիման վրա անդրադառնալով Դիմումի քննության ընթացակարգին՝ Խորհուրդն արձանագրում է, որ Օրենսգրքի 157-րդ հոդվածը կարգավորում է Խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով որոշումների վերանայման ընդհանուր հարցերը, սակայն չի բովանդակում Խորհրդի կողմից այդ վերանայման ընթացքը կարգավորող մանրամասն դրույթներ: Բարձրագույն դատական խորհրդի «Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշմամբ (այսուհետ՝ Աշխատակարգ) ևս նախատեսված չէ Օրենսգրքի նշված հոդվածով սահմանված վերանայման լիազորության իրականացման կարգը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ,

ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա):

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմումի քննարկման պատշաճ ընթացքն ապահովելու նկատառումով՝ նոր հանգամանքի հիմքով Խորհրդի ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշման վերանայման ընթացքի նկատմամբ կիրառվել են համանման հարաբերությունները կարգավորող իրավական նորմը՝ Օրենսգրքի 156.1-րդ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բողոքարկելը» վերտառությամբ հոդվածով (դրա էության հաշվառմամբ) և դրա իրացմանն ուղղված՝ Աշխատակարգի 1-ին հավելվածի 9-րդ գլխով սահմանված կանոնները:

Միաժամանակ, Օրենսգրքի 157-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվում է, որ՝ եթե Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ բացակայում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու հիմքերը, ապա որոշում է ընդունում կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը չվերանայելու վերաբերյալ:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու հիմքերի առկայության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը վերացնում է իր որոշումը և կայացնում է նոր որոշում:

Տվյալ դեպքում, Արդարադատության նախարարը 2022 թվականի դեկտեմբերի 26-ին թիվ 111-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացրել Խորհուրդ՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ նշելով, որ կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 22343/08) գործով 2015 թվականի դեկտեմբերի 3-ին կայացված վճռի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը: Խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշմամբ (նախագահությամբ՝ Խորհրդի նախագահ Կ. Անդրեասյանի, մասնակցությամբ՝ անդամներ Հ. Գրիգորյանի, Ե. Թումանյանցի, Ն. Հովսեփյանի, Մ. Մակյանի, Ա. Մխիթարյանի, Ս. Չիչոյանի, Վ. Քոչարյանի) որոշվել է. «1. Արդարադատության նախարարի միջնորդությունը՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանի

լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել:»: Սուրեն Անտոնյանը 16.05.2023 թվականին գանգատ է ներկայացրել ՄԻԵԴ (գանգատ թիվ 20140/23), որը, քննելով Սուրեն Անտոնյանի դիմումը, 23.01.2025 թվականին կայացրել է Վճիռ՝ արձանագրելով. «(…) տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Կ. Ա.-ի անաչառ չլինելու մասով (…):»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով Վճռով Կ. Անդրեասյանի անաչառ չլինելու մասով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման արձանագրումը, Խորհուրդը հաստատված է համարում, որ առկա է Օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված նոր հանգամանքով Խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշումը վերանայելու հիմքը, ուստի վերոնշյալ որոշումը ենթակա է վերացման:

Վերոնշյալ արձանագրման համատեքստում Խորհուրդը կարևոր է համարում մատնանշել նաև ՄԻԵԴ Վճռում տեղ գտած այն դիրքորոշումները, որ «(…) Դատարանը, այսպիսով, գտնում է, որ դիմումատուի կասկածները՝ կապված նախագահող դատավոր Կ.Ա.-ի անաչառության հետ, օբյեկտիվորեն արդարացված էին, և որ նրան չի տրամադրվել բավարար ընթացակարգային երաշխիքներ այս առումով: (…)», «(…) Դատարանը գտնում է, որ հատուցման առավել նպատակահարմար ձևը կլինի վարույթի վերսկսումը՝ համաձայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի, եթե դիմումատուն այդպես պահանջի՝ Դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն (…)», ինչպես նաև Սահմանադրական դատարանի 29.07.2025 թվականի թիվ ՍԴՈ-1791 որոշմամբ արձանագրված դիրքորոշումն առ այն, որ. **1.** *«(…) Խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու պարագայում Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած «իրավունք ունի» ձևակերպումը նախանշում է Խորհրդի հայեցողությունը՝ գնահատելու և որոշելու օրենքով սահմանված բավարար հիմքերի առկայությունը՝ վերանայման վարույթ հարուցելու համար, սակայն հիշատակված հիմքերի առկայությունը հավաստվելու դեպքում Խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումը նոր հանգամանքի հիմքով ըստ էության վերանայելու պարագայում (ենթադրում է Խորհրդի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված կամ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված իրավական նորմը բովանդակող որոշման վերացում և նոր որոշման կայացում) Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում գործածված «իրավունք ունի» ձևակերպումը միարժեքորեն նշանակում է Խորհրդին վերապահված պարտադիր կատարման ենթակա լիազորություն (…):»*, ***2.*** *«(…) Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումը Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր*

*հանգամանքի հիմքով ըստ էության վերանայելը (որոշումը վերացնելը և նոր որոշում կայացնելը) Բարձրագույն դատական խորհրդի պարտադիր լիազորությունն է:», **3.** «(…) Ինչ վերաբերում է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայմանը, ապա այն վերանայվող դատական ակտի բեկանումից հետո տեղի ունեցող ընթացակարգ է, որի ընթացքում միայն կարող է գնահատվել նոր հանգամանքի ազդեցությունը գործի ելքի վրա, ինչով էլ պայմանավորված է վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը փոփոխելու կամ չփոփոխելու անհրաժեշտությունը:», **4.** « (…) Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայությունը՝ որպես նոր հանգամանք, հիմք է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման վերանայման վարույթ հարուցելու համար: Որպես այդ գործընթացին տրամաբանորեն հաջորդող կարգավորում՝ Օրենսգրքի 157-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված է, որ Խորհրդի որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու հիմքերի առկայության դեպքում Խորհուրդը վերացնում է իր որոշումը և կայացնում է նոր որոշում: (…)»:*

Վերոնշյալ իրավակարգավորումների, իրավական դիրքորոշումների և սույն քննության ընթացքում հաստատված փաստական հանգամանքների, մասնավորապես, ՄԻԵԴ Վճռով արձանագրված խախտման, Դիմողին բավարար ընթացակարգային երաշխիքներ չտրամադրելու և վարույթի վերսկսման նպատակահարմարության վերաբերյալ եզրահանգման հաշվառմամբ, Խորհուրդն արձանագրում է, որ Օրենսգրքի 157-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված նոր որոշման կայացումը հնարավոր է միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Արդարադատության նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ին թիվ 111-Ա որոշմամբ ներկայացված միջնորդության նոր քննության արդյունքում, որով պայմանավորված միայն հնարավոր կլինի անդրադառնալ Օրենսգրքի 157-րդ հոդվածի 9-րդ մասի կիրառմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերով՝ Խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նոր հանգամանքի հիմքով վերանայել՝ վերացնել Բարձրագույն դատական խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշումը:

2. Նոր որոշման կայացման նպատակով Արդարադատության նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ին թիվ 111-Ա որոշմամբ ներկայացված միջնորդության քննության համար Բարձրագույն դատական խորհրդի նիստը նշանակել 2025 թվականի հոկտեմբերի 3-ին՝ ժամը 10:00-ին՝ Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում (ք. Երևան, Կորյունի 17):

3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ _____ ***Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ***

ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____ ***Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ***

_____ ***Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ***

_____ ***Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆ***

_____ ***Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑ***

_____ ***Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ***

_____ ***Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ***

_____ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

_____ ***ԷԴ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

_____ ***Ք. ՄԿՈՅԱՆ***